Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Օգոստոսի 24-ին Կոտայքի թեմի Աբովյան քաղաքում արտասովոր խանդավառություն էր տիրում: Հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցու հիմնարկեքը, որի կառուցումը նախատեսվում է ավարտել երկու տարուց: Եկեղեցին կառուցվում է հովանավորությամբ Ազգային Ժողովի պատգամավոր Գագիկ Ծառուկյանի, որի ազնիվ բարերարությամբ նաև կառուցվել է Առինջի Ս. Աստվածածին և վերանորոգվել Ս. Հովհաննես եկեղեցիները:

Կառուցվող եկեղեցու մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը, եկեղեցու բարերար Գագիկ Ծառուկյանը, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը, Աբովյանի քաղաքապետ Կարապետ Իսրայելյանը: Աղ ու հացի օրհնությունից հետո «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո, թեմի եկեղեցականներից ու Մայր Աթոռի միաբաններից կազմված հանդիսավոր թափորի ուղեկցությամբ, Ամենայն Հայոց Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին, առաջնորդվեց դեպի կառուցվող եկեղեցու հիմերը:

Ձեռամբ Նորին Սուրբ Օծության և արարողությանը մասնակից Սրբազան Հայրերի՝ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և Տ. Առաքել եպս. Քարամյանի, օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը՝ կոչելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի 12 սուրբ առաքյալների, ավետարանիչների, ինչպես նաև Ս. Պողոսի և Ս. Գրիգոր Լուսավորչի անուններով, ապա Ս. Հովհաննես եկեղեցու կնքահայրերը դրանք զետեղեցին եկեղեցու 16 սյուների հիմքերում:

Եկեղեցու հիմքերում ամփոփվեց նաև եկեղեցու հիմնադրության արձանագրությունը:

Եկեղեցու հիմնարկեքի բերկրաշատ առիթով իր մտորումները հայտնեց նաև եկեղեցանվեր բարերարը. «...Մարդիկ հավատք պիտի ունենան, հավատքով պիտի ապրեն: Առաջին քայլն արդեն արվել է. Աբովյանում առաջ չկար եկեղեցի, և այն կառուցելու պատվին Վեհափառն ինձ արժանացրեց: Եվ այսքան ձգձգումներից հետո այս հույսն էլ ես եմ ուզում իրականացնել»,- ասաց տիար Ծառուկյանը՝ մաղթելով, որ այն ծառայի մեր երկրի ամրապնդմանը, զարգացմանն ու բարգավաճմանը:

Արարողության ավարտին հավաքված հավատավոր ժողովրդին Հայրապետական իր խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը. *«...Շուրջ 1700 տարիներ առաջ մեր առաջին Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորիչը եկեղեցի կառուցելու հորդոր և պատգամ ուղղեց հայ ժողովրդին՝ ասելով. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»: 1700 տարիներ շարունակ*

Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻՆ

մեր ժողովուրդը, իր Հայրապետի այս նվիրական պատգամն իր հոգում, կառուցեց և շենացրեց հայոց հողը, հայրենի սրբազան մեր հողը նվիրական տաճարներով ու վանքերով, եկեղեցիներով ու մատուռներով: Այդ պատգամն առավել չափերով հնչեց նաև մեր ժամանակներում, և ազնիվ բարերար հայորդիք ձեռնամուխ եղան եկեղեցաշինության աստվածահաճո նվիրական գործին: ...Այսօր Աստուծո ողորմած կամքով կատարում ենք հիմնարկեքը Աբովյանի Ս. Հովհաննես եկեղեցու, որ իր դռները պիտի բացի մեր հավատավոր զավակների առջև մեկ և կես - երկու տարրուց, ուր բարեպաշտ և աղոթասեր հայորդիք պիտի գան իրենց աղոթքը երկինք բարձրացնելու, իրենց հոգու խաղաղությունը գտնելու, Տիրոջը փառք և օրհնություն վերառաքելու այն շնորհների համար, որ Աստված արժանացնում է մեր ժողովրդին»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հովվապետը իր գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարին ազնիվ նախաձեռնության համար՝ մաղթելով նրան քաջառողջություն և Տիրոջ հովանավոր Աջի զորակցությունը իր բարի իրագործումներում: Նորին Սրբությունը նաև բարձր գնահատեց Տ. Առաքել եպս. Քարամյանի նվիրյալ ծառայությունը, ինչպես նաև իր գնահատանքը հայտնեց եկեղեցու ճարտարապետ Արտակ Ղուլյանին և շինարարներին:

Վերջում կատարվեց նաև մատաղի օրհնություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ